## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 56

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 56 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 9 արտահերթ նիստի

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 57

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 46.2 հոդվածի «ա» կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Բաղրամյան փողոցի թիվ 19/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 04-069-0516-0002 ծածկագրով 19,7 քմ /0,00197 հա/ մակերեսով բնակավայրի ընդհանուր օգտագործման հողամասն առանց մրցույթի կառուցապատման իրավունքով քաղաքացի Վարդան Արշավիրի Ղազարյանին տրամադրելուն:
2. Վարդան Արշավիրի Ղազարյանի հետ կնքել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ 10 /տասը/ տարի ժամկետով՝ 4000 /չորս հազար) դրամ տարեկան վարձավճարով և ապահովել գույքային իրավունքների պետական գրանցումը:
3. Տարեկան վարձավճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր հաշվետու տարվա՝ պայմանագրի կնքման օրվանից սկսած մինչև տասնիհինգերորդ օրը: Սահմանված

ժամկետներում վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկել տույժ՝ տարեկան վճարի գումարի 0.5 տոկոսի չափով:

4. Համայնքի ղեկավարին (Էդգար Հովհաննիսյան) իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | ---------- | ---------- | ---------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ... ՄԱՐԶ ... 04702116

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N58 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 86-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 86-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշմամբ հաստատված «Համայնքի բյուջեի եկամուտներ» տող 1136 /համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար/ պակասեցնել 5.0 հազ.դրամ:
   2) Որոշմամբ հաստատված «Համայնքի բյուջեի եկամուտներ» տող 1351 /Տեղական վճարներ, այդ թվում ծնող. վճար/ պակասեցնել 350.0 հազ.դրամ:
   3) Որոշմամբ հաստատված «Համայնքի բյուջեի եկամուտներ» տող 1352 /Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ/ ավելացնել 95.0 հազ.դրամ:
   4) Վարչական բյուջեի 11 բաժին 1 խումբ 2 դաս հոդված 4891 /պահուստային միջոցներ / պակասեցնել 1700.0 հազար դրամ:
   5) Վարչական բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4232 /համակարգչային ծառայություններ/ ավելացնել 100.0 հազար դրամ:
   6) Վարչական բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4241 /մասնագիտական ծառայություններ / պակասեցնել 100.0 հազար դրամ:
   7) Վարչական բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4261 /գրասենյակային նյութեր / ավելացնել 100.0 հազար դրամ:

8) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 5113 / շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում / պակասեցնել 2019.0 հազար դրամ:
9) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 5122 / վարչական սարքավորումներ/ պակասեցնել 58.0 հազար դրամ
10) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4213 /կոմունալ ծառայություններ / ավելացնել 140.0 հազար դրամ:
11) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4216 /գույքի և սարքավորումների վարձակալություն/ ավելացնել 130.0 հազար դրամ:
12) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4237 /ներկայացուցչական ծախսեր/ ավելացնել 80.0 հազար դրամ:
13) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4251/ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ավելացնել 1440.0 հազար դրամ:
14) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ պակասեցնել 20.0 հազար դրամ:
15) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ ավելացնել 2077.0 հազար դրամ:
16) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5121 /տրանսպորտային սարքավորումներ, նախագծահետազոտական ծախսեր/ ավելացնել 20.0 հազար դրամ:
17) Վարչական բյուջեի 05 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4213 / աղբահանություն/ ավելացնել 200.0 հազար դրամ:
18) Վարչական բյուջեի 09 բաժին 1 խումբ 1 դաս հոդված 4511 /սուբսիդիաներ ՀՈԱԿ - ներին/ պակասեցնել 350.0 հազար դրամ:
19) Վարչական բյուջեի 10 բաժին 7 խումբ 1 դաս հոդված 4729 /այլ նպաստներ բյուջեից/ պակասեցնել 300.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | [signature] | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | [signature] | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | [signature] | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | [signature] | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | [signature] | | |

ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

04702116

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 59

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի ժ) կետով, հիմք ընդունելով սոցիալական օգնությունների և հողի հարկի արտոնության տրամադրման և գույքահարկի զիջման գործառույթների իրականացման հանձնաժողովի թիվ 11 արձանագրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Զիջել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի թվով 2 բնակիչներին պատկանող հողի հարկի գումարից՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 59 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ

| Հ/Հ | Անուն, ազգանուն, հայրանուն | Տրամադրվող արտոնության չափը /դրամ/ |
|---|---|---|
| 1 | Կարինե Ստեփանի Համբարձումյան | 6 000 |
| 2 | Անուշ Ենոքի Ջաքևոսյան | 21 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան